

Ճիշտ պատասխանի ընտրության ձևաչափ
ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2020 թվականի մայիսի 7-ի N 20-Լ հրաման

Հարց

Գիտության կոմիտեն՝

- 1) իրականացնում է գիտության ոլորտում ՀՀ վարչապետին՝ ՀՀ օրենսդրությամբ վերապահված գործառույթները.
- 2) **ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության ենթակա մարմին է.**
- 3) ապահովում է գիտության ոլորտում ՀՀ Նախագահի լիազորությունների կատարումը.
- 4) ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության առանձնացված ստորաբաժանում է:
(2, ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2020թ.մայիսի 7-ի N 20-Լ հրամանի հավելված , կետ 1)

Հարց

Ո՞վ է հաստատում գիտության կոմիտեի տարեկան հաշվեկշիռը՝

- 1) Կոմիտեի գլխավոր քարտուղարը.
- 2) Կոմիտեի նախագահը.
- 3) ՀՀ վարչապետը.
- 4) **ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարը:**
(4, ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2020թ.մայիսի 7-ի N 20-Լ հրամանի հավելված, կետ 13, ենթակետ 6)

Հարց

Գիտության կոմիտեի իր ֆինանսական գործառնություններն իրականացնում է՝

- 1) ՀՀ բանկային համակարգի միջոցով.
- 2) ՀՀ կառավարության աշխատակազմի միջոցով.
- 3) **գանձապետական համակարգի միջոցով.**
- 4) ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության միջոցով:
(3, ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2020թ.մայիսի 7-ի N 20-Լ հրամանի հավելված, կետ 37)

«ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենք

Հարց

Ո՞ր ոլորտների վրա է տարածվում բյուջետային համակարգի օրենքի գործողությունը

- 1) **ՀՀ բյուջետային օրենքի գործողությունը տարածվում է բյուջետային համակարգի բոլոր մակարդակի բյուջեների վրա.**
- 2) ՀՀ բյուջետային օրենքի գործողությունը տարածվում է միայն պետական բյուջեների վրա.
- 3) ՀՀ բյուջետային օրենքի գործողությունը տարածվում է միայն համայնքային բյուջեների վրա.
- 4) ՀՀ բյուջետային օրենքի գործողությունը տարածվում է միայն մասնավոր ընկերությունների բյուջեների վրա.

(1, «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենք, հոդված 1.1)

Հարց

Որո՞նք են բյուջետային հիմնարկները

- 1) բյուջետային հիմնարկներ են բյուջեներից ֆինանսավորվող միայն պետական հիմնարկները.
- 2) բյուջետային հիմնարկներ են բյուջեներից ֆինանսավորվող միայն համայնքային հիմնարկները.

- 3) «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի իմաստով բյուջետային հիմնարկներ են բյուջեներից ֆինանսավորվող պետական և համայնքային հիմնարկները.
- 4) «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի իմաստով բյուջետային հիմնարկներ են բոլոր հիմնարկները.

(3, «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենք, հոդված 5, մաս 1)

Հարց

Որո՞նք են բյուջետային եկամուտները

- 1) բյուջետային եկամուտներն են օրենսդրությանը համապատասխան պետական և համայնքների բյուջեներ մուտքագրվող՝ համապատասխանաբար պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից տնօրինվող դրամական միջոցները (բացառությամբ «ՀՀ բյուջետային համակարգի մասին» օրենքով թվարկված ոչ ֆինանսական ակտիվների օտարումից ստացվող միջոցների և «ՀՀ բյուջետային համակարգի մասին» օրենքով բյուջեների դեֆիցիտի (պակասուրդի) ֆինանսավորման աղբյուրներին դասվող միջոցների).
- 2) բյուջետային եկամուտներն են պետական և համայնքների բյուջեներ մուտքագրվող՝ համապատասխանաբար պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից տնօրինվող դրամական միջոցները.
- 3) բյուջետային եկամուտներն են օրենսդրությանը համապատասխան պետական և համայնքների բյուջեներ մուտքագրվող և պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից տնօրինվող դրամական միջոցները (բացառությամբ «ՀՀ բյուջետային համակարգի մասին» օրենքով բյուջեների դեֆիցիտի (պակասուրդի) ֆինանսավորման աղբյուրներին դասվող միջոցների).
- 4) բյուջետային եկամուտներն են օրենսդրությանը համապատասխան պետական և համայնքների բյուջեներ մուտքագրվող ցանկացած դրամական միջոցները.

(1, «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենք, հոդված 1.2, մաս 1)

«Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենք

Հարց

Որո՞նք են հաշվապահական հաշվառումը կարգավորող իրավական ակտերը

- 1) Հաշվապահական հաշվառումը կարգավորող իրավական ակտերի ցանկը ներառում է միայն «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքը.
- 2) Հաշվապահական հաշվառումը կարգավորող իրավական ակտերը ներառում են «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքը, հաշվապահական հաշվառմանը վերաբերող Հայաստանի Հանրապետության այլ օրենքներ, «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքով սահմանված հաշվապահական հաշվառումը կարգավորող պետական մարմնի կողմից ընդունված իրավական այլ ակտեր.
- 3) Հաշվապահական հաշվառումը կարգավորող իրավական ակտերը ներառում են միայն հաշվապահական հաշվառմանը վերաբերող Հայաստանի Հանրապետության օրենքները.
- 4) Հաշվապահական հաշվառումը կարգավորող իրավական ակտերը ներառում են միայն «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքով սահմանված՝ հաշվապահական հաշվառումը կարգավորող պետական մարմնի կողմից ընդունված իրավական ակտերը.

(2, «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենք, հոդված 3)

Հարց

Ի՞նչ է հաշվապահական հաշվառումը

- 1) հաշվապահական հաշվառումը կազմակերպության ակտիվների, սեփական կապիտալի, պարտավորությունների վիճակի ու շարժի վերաբերյալ դրամական արտահայտությամբ տեղեկատվության հավաքման, գրանցման և ընդհանրացման համակարգ է՝ տնտեսական գործառնությունների համընդհանուր և անընդհատ փաստաթղթային հաշվառման միջոցով.
- 2) հաշվապահական հաշվառումը միայն կազմակերպության ակտիվների, պարտավորությունների վիճակի ու շարժի վերաբերյալ դրամական արտահայտությամբ տեղեկատվության հավաքման, գրանցման և ընդհանրացման համակարգ է.
- 3) հաշվապահական հաշվառումը կազմակերպության ակտիվների, սեփական կապիտալի, պարտավորությունների վիճակի վերաբերյալ համակարգ է.
- 4) հաշվապահական հաշվառումը կազմակերպության դրամական համակարգ է՝ տնտեսական գործառնությունների համընդհանուր և անընդհատ փաստաթղթային հաշվառման միջոցով.

(1, «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենք, հոդված 5, մաս 1)

Հարց

Ո՞վ է սահմանում պարտադիր գույքագրման օբյեկտների կազմը, անցկացման կարգը և ժամկետները

- 1) պարտադիր գույքագրման օբյեկտների կազմը, անցկացման կարգը և ժամկետները սահմանվում է օրենքով.
- 2) պարտադիր գույքագրման օբյեկտների կազմը, անցկացման կարգը և ժամկետները սահմանում է ՀՀ կառավարությունը.
- 3) պարտադիր գույքագրման օբյեկտների կազմը, անցկացման կարգը և ժամկետները սահմանում է ՀՀ վարչապետը.
- 4) պարտադիր գույքագրման օբյեկտների կազմը, անցկացման կարգը և ժամկետները սահմանում է ՀՀ ֆինանսների նախարարը.

(2, «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենք, հոդված 17)

«Գանձապետական համակարգի մասին» ՀՀ օրենք

Հարց

Ի՞նչ է գանձապետարանը

- 1) գանձապետարանը ՀՀ կառավարության կողմից լիազորված պետական կառավարման մարմնի աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանում է.
- 2) գանձապետարանը պետական ֆինանսների կառավարման բնագավառում ՀՀ կառավարության կողմից լիազորված պետական կառավարման մարմնի աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների ամբողջությունն է.
- 3) գանձապետարանը «Գանձապետական համակարգի մասին» ՀՀ օրենքով նախատեսված խնդիրների իրականացման կազմակերպումն ապահովող կառուցվածքային ստորաբաժանումների ամբողջությունն է.
- 4) գանձապետարանը, պետական ֆինանսների կառավարման բնագավառում ՀՀ կառավարության կողմից լիազորված պետական կառավարման մարմնի աշխատակազմի՝ «Գանձապետական համակարգի մասին» ՀՀ օրենքով նախատեսված խնդիրների իրականացման կազմակերպումն ապահովող կառուցվածքային ստորաբաժանումների ամբողջությունն է.

(4, «Գանձապետական համակարգի մասին» ՀՀ օրենք, հոդված 3, մաս 2)

Հարց

Ինչպիսի՞ հաշվետվություններ է ներկայացնում գանձապետարանին պետական մարմինը

- 1) պետական մարմինը գանձապետարանին ֆինանսատնտեսական գործունեության տարեկան հաշվետվությունը ներկայացնելու իրավունք չունի.
- 2) **լիազոր մարմնի կողմից սահմանված կարգով պետական մարմինը գանձապետարանին է ներկայացնում ֆինանսատնտեսական գործունեության տարեկան հաշվետվությունը.**
- 3) պետական մարմինը գանձապետարանին է ներկայացնում ֆինանսատնտեսական գործունեության կիսամյակային հաշվետվությունը.
- 4) պետական մարմինը գանձապետարանին է ներկայացնում ֆինանսատնտեսական գործունեության եռամսյակային հաշվետվությունը.

(2, «Գանձապետական համակարգի մասին» ՀՀ օրենք, հոդված 16, մաս 1)

Հարց

Պետական հիմնարկի գլխավոր հաշվապահը լիազոր մարմնի սահմանած կարգով պատրաստում և հիմնարկի անունից պետական մարմնի գլխավոր ֆինանսիստին է ներկայացնում ամսական հաշվետվություններ, որոնք պետք է ներառեն՝

- 1) ամփոփ գործողությունների նկարագրությունը, որոնց իրագործման արդյունքում հնարավոր կլինի ապահովել միայն նախատեսված եկամուտները.
- 2) ամփոփ գործողությունների նկարագրությունը, որոնց իրագործման արդյունքում հնարավոր կլինի ապահովել միայն նախատեսված ծախսերը.
- 3) **ամփոփ գործողությունների նկարագրությունը, որոնց իրագործման արդյունքում հնարավոր կլինի ապահովել ծրագրավորված եկամուտները և ծախսերը.**
- 4) ամփոփ գործողությունների նկարագրությունը, որոնք կխանգարեն ապահովել ծրագրավորված եկամուտները և ծախսերը.

(3, «Գանձապետական համակարգի մասին» ՀՀ օրենք, հոդված 16, մաս 2)

« Գնումների մասին» ՀՀ օրենք

Հարց

Ի՞նչ է գնման առարկան

- 1) **գնման առարկա՝** միայն գնվող ապրանքը.
- 2) **գնման առարկա՝** գնվող ապրանքը, աշխատանքը կամ ծառայությունը.
- 3) **գնման առարկա՝** միայն աշխատանքը.
- 4) **գնման առարկա՝** միայն ծառայությունը.

(2,« Գնումների մասին» ՀՀ օրենք, հոդված 2)

Հարց

Ի՞նչ է էլեկտրոնային աճուրդը

- 1) էլեկտրոնային աճուրդը էլեկտրոնային միջոցների օգտագործմամբ նոր գների ներկայացման գործընթաց է, որը հնարավորություն է տալիս ավտոմատ գնահատման մեթոդներով (միջոցներով) որոշել հայտեր ներկայացրած մասնակիցների զբաղեցրած տեղերը.
- 2) **էլեկտրոնային աճուրդը էլեկտրոնային միջոցների օգտագործմամբ նոր՝ նվազեցված գների ներկայացման գործընթաց է, որը հնարավորություն է տալիս ավտոմատ գնահատման մեթոդներով (միջոցներով) որոշել հայտեր ներկայացրած մասնակիցների զբաղեցրած տեղերը՝ հաջորդականությունը.**
- 3) էլեկտրոնային աճուրդը էլեկտրոնային միջոցների օգտագործմամբ գների ներկայացման նոր գործընթաց է, որը հնարավորություն է տալիս ավտոմատ գնահատման մեթոդներով որոշել հայտեր ներկայացրած մասնակիցների զբաղեցրած հաջորդականությունը.

4) էլեկտրոնային աճուրդը նոր՝ նվազեցված գների ներկայացման գործընթաց է, որը հնարավորություն է տալիս ավտոմատ գնահատման մեթոդներով որոշել հայտեր ներկայացրած մասնակիցների զբաղեցրած տեղերը.

(2, « Գնումների մասին» ՀՀ օրենք, հոդված 2)

Հարց

Գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

- 1) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների միջև մրցակցության խրախուսում.
- 2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների քանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.
- 3) պայմանագրի կնքման նպատակով մրցակցության հրահրում մասնակիցների միջև.
- 4) **պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.**

(4, « Գնումների մասին» ՀՀ օրենք, հոդված 3, մաս 2)

«Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենք

Հարց

Ի՞նչ է հիմնական աշխատավարձը

- 1) **«Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքով նախատեսված բազային աշխատավարձի և նույն օրենքով նախատեսված գործակցի արտադրյալ.**
- 2) բազային աշխատավարձի և կոնկրետ գործակցի արտադրյալ.
- 3) «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքով բազային աշխատավարձի և նույն օրենքով նախատեսված գործակցի գումար.
- 4) աշխատանքի ընդունման պայմանագրում նախատեսված աշխատավարձ.

1, «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենք, հոդված 3

Հարց

Ո՞վ է սահմանում պետական պաշտոն և պետական ծառայության պաշտոն զբաղեցնող անձանց բազային աշխատավարձի չափը

- 1) **պետական պաշտոն և պետական ծառայության պաշտոն զբաղեցնող անձանց բազային աշխատավարձի չափը սահմանվում է յուրաքանչյուր տարվա պետական բյուջեի մասին ՀՀ օրենքով.**
- 2) պետական պաշտոն և պետական ծառայության պաշտոն զբաղեցնող անձանց բազային աշխատավարձի չափը յուրաքանչյուր տարի սահմանում է ՀՀ կառավարությունը.
- 3) պետական պաշտոն և պետական ծառայության պաշտոն զբաղեցնող անձանց բազային աշխատավարձի չափը յուրաքանչյուր տարի սահմանում է ՀՀ վարչապետը.
- 4) պետական պաշտոն և պետական ծառայության պաշտոն զբաղեցնող անձանց բազային աշխատավարձի չափը սահմանվում է օրենքով.

1, «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենք, հոդված 5, մաս 1

Հարց

Ե՞րբ է իրականացվում աշխատավարձի հերթական միավոր ավելացումը

- 1) հիմնական աշխատավարձի հերթական մակարդակի ավելացումը իրականացվում է աշխատանքային տարին լրանալուց.
- 2) պետական ծառայողի հիմնական աշխատավարձի հերթական մակարդակի ավելացումը, իրականացվում է հունվարի 1-ից՝ աշխատավարձի սանդղակին համապատասխան.
- 3) **պետական ծառայողի հիմնական աշխատավարձի հերթական մակարդակի ավելացումը իրականացվում է աշխատանքային տարին լրանալուն հաջորդող ամսվա 1-ից՝ աշխատավարձի սանդղակին համապատասխան.**
- 4) հիմնական աշխատավարձի հերթական մակարդակի ավելացումը իրականացվում է աշխատանքային տարին լրանալուն պես՝ աշխատավարձի սանդղակին համապատասխան.

3, «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենք, հոդված 20, մաս 6

«Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենք

Հարց

Ինչպե՞ս է ձևավորվում պետական կազմակերպության սեփականությունը

- 1) պետական կազմակերպության սեփականությունը ձևավորվում է միայն հիմնադրման ժամանակ հիմնադրի կողմից սեփականության իրավունքով նրան հանձնվող գույքից.
- 2) **պետական կազմակերպության սեփականությունը ձևավորվում է կազմակերպության հիմնադրման ժամանակ և հետագայում հիմնադրի կողմից սեփականության իրավունքով նրան հանձնվող, ինչպես նաև պետական կազմակերպության գործունեության ընթացքում արտադրված և ձեռք բերված գույքից.**
- 3) պետական կազմակերպության սեփականությունը ձևավորվում է միայն հետագայում հիմնադրի կողմից սեփականության իրավունքով նրան հանձնվող գույքից.
- 4) պետական կազմակերպության սեփականությունը ձևավորվում է միայն պետական կազմակերպության գործունեության ընթացքում արտադրված և ձեռք բերված գույքից.

2, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենք, հոդված 4, մաս 1

Հարց

Կարող է արդյո՞ք պետական կազմակերպությունը զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ

- 1) պետական կազմակերպությունը ձեռնարկատիրական գործունեությամբ չի կարող զբաղվել
- 2) **պետական կազմակերպությունը ձեռնարկատիրական գործունեությամբ կարող է զբաղվել միայն օրենքով կամ հիմնադրի որոշմամբ ուղղակիորեն նախատեսված դեպքերում և գործունեության տեսակներով: Լիցենզավորման ենթակա գործունեության տեսակներով պետական կազմակերպությունը կարող է զբաղվել միայն լիցենզիայի հիման վրա.**
- 3) բոլոր դեպքերում պետական կազմակերպությունը ձեռնարկատիրական գործունեությամբ կարող է զբաղվել
- 4) պետական կազմակերպությունը ձեռնարկատիրական գործունեությամբ կարող է զբաղվել միայն ՀՀ կառավարության թույլտվությամբ.

2, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենք, հոդված 6, մաս 1

Հարց

Ո՞վ է իրականացնում պետական կազմակերպության կառավարումը

- 1) պետական կազմակերպության կառավարումն իրականացնում է միայն հիմնադիրը.
- 2) պետական կազմակերպության կառավարումն իրականացնում է միայն գործադիր մարմինը
- 3) **պետական կազմակերպության կառավարումն իրականացնում են հիմնադիրը, նրա լիազորած պետական մարմինը, գործադիր մարմինը (տնօրեն, նախագահ, ռեկտոր և այլն):**
Հիմնադրի որոշմամբ կամ պետական կազմակերպության կանոնադրությամբ կարող են նախատեսվել նաև կոլեգիալ կառավարման, խորհրդակցական, վերահսկողություն իրականացնող և (կամ) այլ մարմինների (խորհուրդ, տնօրենների խորհուրդ և այլն) ձևավորում.
- 4) պետական կազմակերպության կառավարումն իրականացնում է միայն հիմնադրի որոշմամբ ստեղծված կոլեգիալ կառավարման մարմինը.

3, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենք, հոդված 12, մասեր 1 և 2

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենք, հոդվածներ

Հարց

Ի՞նչ է նորմատիվ իրավական ակտը

- 1) **Հայաստանի Հանրապետության ժողովրդի, ինչպես նաև Սահմանադրությամբ նախատեսված մարմինների կամ պաշտոնատար անձանց ընդունած գրավոր իրավական ակտ, որը պարունակում է վարքագծի պարտադիր կանոններ անորոշ թվով անձանց համար.**
 - 2) Միայն Ազգային ժողովի ընդունած օրենքները.
 - 3) Միայն կառավարության ընդունած որոշումները.
 - 4) Միայն վարչապետի ընդունած որոշումները:
- (1, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենք, հոդված 2)

Հարց

Ի՞նչ է անհատական իրավական ակտը

- 1) վարքագծի կանոն, որը վերաբերում է միայն նշված կոնկրետ անձի կամ անձանց համար.
 - 2) Գրավոր փաստաթուղթ, որը վերաբերվում է միայն դրանում անհատապես նշված անձանց համար.
 - 3) **նորմատիվ իրավական ակտի հիման վրա և դրան համապատասխան ընդունված գրավոր իրավական ակտ, որը սահմանում է վարքագծի կանոն կամ առաջացնում է փաստական հետևանքներ և վերաբերում է միայն դրանում անհատապես նշված անձի կամ անձանց.**
 - 4) Միայն մարմնի ղեկավարի ընդունած իրավական ակտը:
- (3, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենք, հոդված 2)

Հարց

Ի՞նչ է ներքին իրավական ակտը

- 1) **նորմատիվ իրավական ակտի հիման վրա և դրան համապատասխան ընդունված իրավական ակտ, որը սահմանում է վարքագծի կանոն այն անձանց խմբի համար, որոնք դա ընդունող մարմնի հետ աշխատանքային կամ վարչական հարաբերությունների մեջ են կամ օգտվում են դա ընդունող մարմնի ծառայություններից կամ աշխատանքներից**
 - 2) միայն մարմնի ղեկավարի ընդունած իրավական ակտը:
 - 3) վարքագծի կանոն, որը վերաբերում է միայն նշված կոնկրետ անձի կամ անձանց համար.
 - 4) վարքագծի կանոն, որը վերաբերում է միայն այն անձանց խմբի համար, որոնք դա ընդունող մարմնի հետ աշխատանքային կամ վարչական հարաբերությունների մեջ են.
- (1, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենք, հոդված 2)